ԳԱԳԻԿ ԲԵԳԼԱՐԻ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Ծնվել է 1964 թվականի հունվարի 1-ին Երևանում:
1971-78 թվականներին սովորել է Մ. Նալբանդյանի անվան թիվ 33 միջնակարգ դպրոցում:
1978-81 թվականներին սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանին կից ֆիզիկամաթեմատիկական դպրոցը:
1981-85 թվականներին սովորել և ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ տնտեսագետի որակավորմամբ:
1985-86 թվականներին ծառայել է խորհրդային բանակում:
1993 թվականին ընտրվել է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին գումարման պատգամավոր:
2002-ին ընտրվել է Կենտրոն համայնքի թաղապետ: Վերընտրվել է 2005-ին և 2008-ի սեպտեմբերի 28-ին:
ՀՀ նախագահի 04.03. 2009թ. թիվ ՆՀ-58-Ա հրամանագրով նշանակվել է Երևանի քաղաքապետ:
2009թ. մայիսի 31-ին տեղի ունեցած Երևանի ավագանու ընտրությունների արդյունքում դարձել է Երևանի առաջին ընտրված քաղաքապետը:
2007թ. նոյեմբերի 10-ին (ՀՀԿ 11-րդ համագումար) ընտրվել է Հայաստանի հանրապետական կուսակցության խորհրդի անդամ:
2009թ. նոյեմբերի 28-ին ընտրվել է ՀՀԿ գործադիր մարմնի անդամ:
2004 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Թաղապետարանական կառավարման սոցիալական հիմնախնդիրները» թեմայով՝ ստանալով սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:
Կենտրոն համայնքի մտավորականների «Նարեկ» ակումբի պատվավոր նախագահն է:
Ամուսնացած է, ունի երկու զավակ:
Պաշտոնավարել է մինչև 2010թ. դեկտեմբերի 8-ը: